

ՀԵՍՆ ԼՈՒՍՃՈՂԿՈՄԱՑ  
ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

---

Ծ Ր Ա Գ Ի Ր  
ՈՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ

ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԴ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1937



ՀԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍՏ  
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

407(071.2)

ՄՏՈՒԳՎԵՍ Է 1909 Է.

# Ծ Ր Ա Գ Ի Ր ՈՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ

ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Թարգմ. Ա. Ղարիբյան)

A  
23055  
1270



Գ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1937



# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԳՊՐՈՅՆԵՐԻ ՈՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ

### ՄԵԹՈԴԱԿԱՆ ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

#### ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅ

Ուսման առաջին տարում հիմնական դասընթացին նախորդում են ներածական դասերը: Նրանց նպատակն է. 1) տալ սովորողներին ոտար լեզվի ճիշտ արտասանության ունակություն՝ հատուկ ընարված «տեքստերի միջոցով, վորոնք պիտի դասավորված լինեն ըստ հնչյունա-կան դժվարությունների աճման, 2) տալ բանավոր խոսքի տարրական առանձին ունակություններ:

Առաջին դասին դասատուն աշակերտներին հետ զրույց է ունե-նում ոտալ լեզուն ուսումնասիրելու կուլտուրական և քաղաքական նշանակության մասին:

Հնչյունները յուրացվում են հետևյալ հաջորդականությամբ. 1) հնչյուններ, վորոնք իրենց արտասանությամբ մոտ են հայերենի հնչյուններին, 2) հնչյուններ, վորոնք նման չեն հայերենին և 3) հնչյուն-ներ, վորոնք խորթ են հայերենին:

Դասատուն պետք է այնպես տանի ոտար լեզվի ուսուցումը, վոր օգտագործվեն գրատողականության բոլոր ձևերը, ինչպես՝ ցուցադրում, ժեստ շարժում, դիմախաղ (միմիկա), զբստախտակի վրա գծագրելը և այլն:

Ուսուցման առաջին յիրեք տարում անհրաժեշտ է հայերեն բացատրել հնչյունների արտիկուլյացիան և տալ քերականական պարզարանումներ:

#### ԿԱՐԳԱԼՈՒՆ ԱՆՑՆԵԼԸ

Բարձրաձայն կարգավու ունակության մշակումը՝ ճիշտ արտա-սանության և ինտոնացիայի պահպանմամբ՝ տրվում է յուրաքանչյուր դասին՝ բանավոր մշակելուց հետո: Ուսման առաջին տարիներում

աշակերտները կարգում են միայն այն տեքստը, վորի քերականական և բառային մատերիալն անցել են թե բանավոր, թե գրավոր: Նախնական աշխատանքն և. ա) զրույց նկարի մասին՝ կապված տեքստի հետ, բ) բանավոր պատասխաններ՝ տրված հարցերին, գ) դիալոգ՝ (խոսակցութուն) դասատուի հետ և այլն:

Այսպիսով, նախապես ուսումնասիրվում են բոլոր այն բաները, դարձվածքները և քերականական ձևերը, վոր պարունակում և տվյալ տեքստը: Այնուհետև ուսուցիչն ինքն և բարձրաձայն կարգում տեքստը, հետո աշակերտները՝ անհատորեն, և վերջում՝ խմբովին: Կարգալիս հատուկ ուշադրութուն է դարձվում առողանությանը և սիթմին:

Արտասանության վրա աշխատանք և կատարվում ուսուցչման ամբողջ ընթացքում ընթերցանության տեխնիկան դարգացնելու. և կարգացած հասկանալուն համընթաց խորացնելով և ընդարձակելով այն ունակութունները, վորոնք ձեռք են բերվել ներածական կուրսն անցնելու ընթացքում:

### ԳՐԵԼՈՒՆ ԱՆՅՆԵԼԸ

Գրելուն պեսք է անցնել յերկրորդ—յերրորդ դասին, տեքստի բանավոր մշակումից հետո: Հարկավոր և աշակերտներին ծանոթացնել լատինական շրիթաի հետ՝ պահպանելով ուղղադրական դժվարութունների աճման նույն հաջորդականութունը, ինչ վոր առաջ՝ հընչյունականինը: Պեսք է գրի առնել միայն այն տեքստերը, վորոնք արդեն բանավոր լավ ուսումնասիրվել են: Տեքստերի գրավոր յուրացումն ընթանում է հետևյալ հերթականությամբ. տեքստերի արտագրումը, տիպական նախադասութունների գրանցում՝ տեղադրումնելով, պատասխաններ՝ հարցերին, սովորողների կողմից ինքնուրույն նախադասութուններ կադմել: Քերականութունը, վորպես այդպիսին, ներածական կուրսում բացակայում և: Քերականական ձևերը սովորողների կողմից յուրացվում են վորպես բառային մատերիալ:

### ԲԱՆՍՎՈՐ ԽՈՍԻՐ

Բունավոր խոսքը, ոտար լեզվի ավանդման ընթացքում, հունդիստում և յերակեսային մումենքը:

Աշխատանքների կարելորագույն ձևերից մեկը հանդիսանում է բանավոր խոսքի ունակութունների դարգացումը: Դա ձեռք և բերվում. 1) մատերիալը հետզհետե բարդացնելու ճանապարհով (հեշտից ավելի դժվարին անցնելը), 2) ուսուցչման ձևերը (պրիոմ) հետզհետե բարդացնելու ճանապարհով, 3) իրենց՝ սովորողների կողմից ուսումնասիրվող մատերիալը բազմապատիկ և բազմակողմանի կերպով ոգտագործելու միջոցով:

Ուսուցման առաջին տարիներում խոսելու՝ ունակութիւններէ պարզացումը կատարվում ե հետեյալ ձևով.

Տեքստի մէջ յիշած նոր բառերը բացատրվում են դասատուի կողմից, ըստօրում նրա կողմից ուղտադործվում են դիտողականութեան բոլոր ձևերը. նույն այդ ձևով նա նոր բառը դործ ե ամում նախադասութեան մեջ՝ հնարավորութեան սահմաններում առանց թարգմանելու:

Ուսուցման յերկրորդ տարուց սկսած, յերբ արդեն սովորողները ձեռք են բերել վորոշ բառապաշար, բառերի բացատրութեան ժամանակ կարելի յի գլմնել համանուն բառերի, համանիշների (անտոնիմ), վորոշիչների ե այլն, ողնութեան:

Նոր բառերի վրա կատարվող ամբողջ աշխատանքը տարվում ե կենդանի դրույցի ձևով ե շարկապվում ե հին մատերիալի հետ: Տիպական նախադասութեանների վրա կատարված աշխատանքը հանգում ե քերականութեան ե բառագիտութեան միաժամանակյա յուրացմանը: Սկզբից նախադասութեանը տրվում ե քերականական նոր ձևով, բայց արդեն բառային յուրացրած մատերիալով: Նախադասութեան կառուցվածքը չխախտելով, սովորողներին սկզբում համապատասխան բառը փոխարինում են ծանոթ բառով, իսկ հետո՝ նոր բառով: Արդունքը լինում ե այն, վոր ստացվում են մի շարք նախադասութեաններ, վորոնք ունենում են հին ձև ե նոր բովանդակութեան:

Տեքստի ընթերցումից հետո, վորը ծառայում ե բացատրված բառերի ե նոր քերականական ձևերի յուրացումը խորացնելուն, առաջադրվում են մի շարք հարցեր, ինչպես տեքստի բովանդակութեանից բղիտղ, նույնպես ե նրան վերաբերող: Որինակ, սենյակը նկարագրելիս պետք ե հարցերն այնպես դնել, վոր սովորողները պատմեն իրենց կամ ընկերոջ սենյակի մասին ե այլն:

Բանավոր խոսքի զարգացման աշխատանքի հիմնական ձևը հանդիսանում ե խոսակցութեանը (դիալոգ): Նա էր սկիզբն առնում ե վերոհիշյալ հարց ու պատասխանի սխտեմից, անկախ նրանից՝ տեքստից ե բղիտում այն, թի՛մ վո՛չ. այդ վերջանում ե զբոլոյցով՝ վորոշ թեմայի շուրջը. բայց ամենորոյա պարզ դիալոգից, հարկավոր ե անցկացնել այլևի բարդ բնույթ կրող նախապատրաստված դիալոգ՝ մի վորոշ թեմայի շուրջը: Այդպիսի դիալոգին նախապատրաստվելը տեղի յի ունենում հետեյալ կերպ. ուսուցիչը սովորողներին հայտնում ե թեման կամ առաջաբերում ե, վոր իրենք ընտրեն այն: Այնուհետե նշվում ե խոսակցութեան ընդհանուր պլանը, ե վերհիշվում են՝ բոլոր այն բառերն ու արտահայտութեանները, վորոնք առաջուց հաղորդվել են այդ հարցի առթիւ: Իրանից հետո ուսուցիչը լրացնում ե պակասող արտահայտութեանները, ուշադրութեան ե առնում լինվական առանձնա-

հասկուլթյունները ինչպես հին, այնպես եւ նոր, գրում եւ գրանք գրատախտակի վրա, առաջարկում այդ արտահայտությունները պարունակող մի շարք նախադասություններ կազմել: Ուսուցիչն ինքը պետք է սովորողներին ցույց տա խոսակցությունների նմուշներ, Հատուկ ուշադրություն եւ դարձվում ձայնի բնական լինելու, ուրախություն, դարմանք, դայրույթ եւ թախիժ արտահայտող ինտոնացիայի վրա եւ այլն: Այդպիսի ցուցադրական խոսակցությունից հետո, այդ թեմայի շուրջը խոսում են մնացած սովորողները: Խոսակցությունը պետք է պարունակի այնպիսի արտահայտություններ, վորոնք հասկապես կարելիոր են այս կամ այն թեմայի համար, որինակ՝ խոսակցություն հեռախոսով, տոմսեր գնելը՝ կայարանում, թատրոնում եւ այլն: Բարձր դասարաններում, խոսակցությունից հետո, անհրաժեշտ եւ անցկացնել եւ նրա քննադատությունը: Կարողանում եւ արդյոք սովորողը խոսել կարճ նախադասություններով, խոսակցությունը բնական էր, կային հրճատումներ, հետաքրքրել էր, հասկանալի, խոսակցությունը նախապատրաստված էր, արտասանության, բարբառային եւ քերականական ինչպիսի սխալներ են նկատել ընկերները. կարելի՞ չեր այդ խոսակցությունն անցկացնել ուրիշ արտահայտություններով եւ այլն:

Սուսնձ ահատուկ մոճերի ուսումնասիրության եւ բանավոր խոսքի դարգացման վարժությունների սխտեմում պակաս կարելիոր գեր չի խաղում աշխատանքը՝ զննական պիտույքներով: Անկյունաքարը համարվում եւ նկարներով աշխատանքը: Նկարներն սպասվործվում են ինչպես առարկաներ, անձ, հասկուլթյուն, գործողություն եւ այլն ցույց տվող բառերի բացատրության համար նույնպես եւ քերականական յերկուլթյունները բացատրելու համար, բայական ձևեր, հոգնակի թիվ, թվականներ, դասականներ եւ քանակականներ, ածականներ, ցուցականներ, ստացականներ, եւ այլն: Պակաս կարելիոր չե նկարների գերը անցած մատերիայի կրկնության եւ սովորողների կողմից նրա յուրացումն ստուգելու տեսակետից: Աշխատանքը նկարներով հետապնդում եւ մոչ միայն լեզվական ունակությունները դարգացնելու, այլեւ դաստիարակչական նպատակ ընդհանրապես: Նկարները չպետք է ծանրաբեռնված լինեն ավելորդ մատերիայով, բովանդակությամբ պետք է նրանք յերկխաներին մոտ լինեն եւ հասկանալի, իրերողդիպես կայուն: Փարուլան պետք է լինի հասարակ եւ պարզ: Նկարը պետք է առաջ բերի խոսակցություն: Սկզբնական շրջանում նա չպետք է պահանջի այնպիսի բառեր եւ արտահայտություններ, վորոնք նախատեսված չեն սովորողների բառարանային ակտիվ պաշարով: Հարկավոր չե նկարը շատ անգամ իրար վրա դասարան բերել, առավել եւ պետք չե այն կախել պատից եւ թողնել, նա կձանձրացնի եւ այդ պատճառով կկորցնի իր մանկավարժական արժեքը:

Հետագայում նկարները կարող են հարուստ մատեցիալ տալ բանա-  
վոր խոսքի զարգացման համար: Վորպեսզի նկարը նկարագրելու համար  
անհրաժեշտ բառեր չլիմանալը չլիանգարի պատմվածքի սահունու-  
թյունը, անհրաժեշտ է նախորոք տալ այդ բառերը և հարկ չեղած  
մոմենտին վերահանդնել դրանք սովորողի հիշողութեան մեջ:

Աշխատանքի նախորդ ձևերը լավ զարգացրած խոսակցութեան հետ  
միասին հանդուժ են դրամատիկացիային, վորն սկզբում և ամենա-  
հասարակ խոսակցութեաններից և վերջանում և բարդ ինտենսիվու-  
կայով:

Իրամատիկացիան տարվում և սեփական փոփոխակներով բոլոր  
դասարաններում՝ հինգերորդից մինչև 12 տասներորդը: Վարժություն-  
ների, ձևերից մեկը, ոտար լեզվի բնագավառում, հանդիսանում են  
սովորողների ինքնուրույն հաղորդումները: Իրանք նպաստում են  
հետաքրքրող հարցի մանրակրկիտ նախապատրաստմանը՝ թեման գրա-  
նելը, մատերիալ հավաքելը, դրանք կաթիլներում ուսումնասիրելը  
(համապատասխան սովյալների քաղվածք և այլն), դրանք բոլորը մի  
հայտարարի բերելը: Աշխատանքի այդ ձևի նախապատրաստական  
ըրջանը հանդիսանում են վերապատմելու ախար կարճ հաղորդումները:

Տնային դրավոր աշխատանքը, նկարագրութեան կամ խոսակցու-  
թյուն՝ դասատվի ցուցմունքներով կամ սովորողների կողմից ընտրած  
թեմայի շուրջը, նպաստում և ձևք բերված լեզվական մատերիալի և  
բանավոր խոսքի ունակութեանների զարգացման ամբասանումն է:

Ինքնուրույն նախադասութեաններ կազմելու; նկարագրու-  
թյունների կամ խոսակցութեանների ժամանակ սովորողներին թույ-  
տարվում և ոգտվել բացառապես ծանոթ բառապաշարով և արդեն  
քերականական յուրացրած ձևերով: Այդ նպատակով անհրաժեշտ և  
հաշվի առնել և սխտեմատիկացիայի յենթարկել սովորողների ակտիվ  
բառապաշարը: Ուսուցման առաջին յերկու տարիներին սովորողները  
բառերի գրանցումը պետք և կատարեն ըստ ձևաբանական հատկանիշ-  
ների, քանի վոր այդպիսի կլասիֆիկացիան դյուրացնում և հարկ չեղած  
բառը դանելու մի բառը մյուսով փոխարինելու և բառային ու քերա-  
կանական վարժութեանների ժամանակ, վորոնց համար հետագա տարի-  
ների կարելի յե առաջարկել բառերի կլասիֆիկացիան՝ ըստ թեմանե-  
րի և բառակաղմութեան տարբեր հատկանիշների:

Սոսերու ունակութեանների զարգացման գործում շատ կարե-  
վոր դեր է խաղում ուսուցչի ոտար լեզվով խոսելը: Առաջին իսկ դա-  
սից ուսուցչի ոտար լեզվով արտասանած վորջույնը, առաջադրու-  
թյունները նպաստում են աշակերտների լսողական ըմբռնողութեան  
զարգացմանը և հանդիսանում են հիմնական պրիոմներից մեկը, վոր  
հանդուժ են ոտարակողու խոսքը հասկանալուն:

Վրոտանապոքներն անգլիք սովորելը, ինսցենսիրովկաները, կոլեկտիվ արտասանութիւնները, յերգեցողութիւնը, խաղերը և այլն խթանում են հետաքրքրութիւն գեպի ուսումնասիրվող լեզուն և միջոց կն հանդիսանում բանավոր խոսքի զարգացման համար:

Աշխատանքի բոլոր այդ ձևերի ժամանակ ել անհրաժեշտ և հատուկ ուշադրութիւն դարձնել արտասանութիւն, ինտոնացիայի և բիթմի ճշտութիւն վրա:

## ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման յերրորդ տարվա վերջին և չորրորդ տարում աշխատանքի վերոհիշյալ ձևերին միանում են. 1) անալիտիկ ընթերցանութիւն, 2) կուրսորային ընթերցանութիւն, վոր ընդհանրապես ընդգրկում և բովանդակութիւնը՝ առանց մանրամասն վերլուծման և տեքստի մեկնարանման, 3) լուռ ընթերցանութիւն, վորի նպատակն և սովորեցնել աշակերտներին մատուցվել նախադասութիւն կամ սովորչական պարբերութիւն իմաստի շուրջը: Այդ աշխատանքը պետք և կատարվի ուսուցման յերրորդ տարում, զրա համար հատկապես ընտրված տեքստերում, վորոնք պիտի ունենան շատ հասարակ շարանյուսական կառուցվածք և պիտի պարունակեն շատ քիչ նոր բառեր:

Բացի ընթերցանութիւն թված ձևերից, յերբեմն կիրառվում և և իմպրեսիոն ընթերցանութիւն (impression — տպավորութիւն), վորին հատկացվում և դասի 5—10 բովան: Ուսուցիչը կարողում և այնպիսի տեքստ, վորը չունենան աշակերտները: Այդ ընթերցանութիւն ժամանակ ի նկատի յե տնչվում միայն լեզվական տպավորութիւնները կուտակումը, չի պահանջվում վոչ տեքստի բացատրութիւն, վոչ և և կարգացած տեքստի ընդհանուր իմաստը միայն: Իմպրեսիոն (տպավորական) ընթերցանութիւն հիմնական նպատակը հանդիսանում և լեզվի անմիջական բովանման զարգացումը: Իմպրեսիոն ընթերցանութիւն համար ընտրված հատվածները պետք և պարունակեն աշակերտը բառ բովանդակութիւն:

Սկսած ուսուցման յերրորդ տարվանից, այբբենական բառարան ունեցող նոր տեքստը կարգալիս, սովորողը պետք և ձեռք բերի բառարանով աշխատելու ունակութիւն: Դրա համար աշակերտը պետք և կարողանա գտնել նախադասութիւն գլխավոր անդամները (յնթակա և ստորոգյալ) և անձանութ բառի հիմնական ձևը (ինֆինիտիվ, յեղակի թվի ուղղական հոլով), կարողանա ընտրել տվյալ դարձվածային արտահայտութիւն համար ճիշտ նշանակութիւն:

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Ոտար լեզվով տեքստի հայերեն թարգմանությունը կրում և սովորածի վերջնական ստուգման բնույթ, այն բանից հետո, յերբ տեքստը հասկանալու ստուգման բոլոր ձևերը կիրառվել են: Թարգմանությունը պետք և լինի ուղիղ, իսկ բարձր դասարաններում, նաև՝ գրական լեզվի որինակ: Բարձր դասարաններում յերբեմն կիրառվող հսկառակ թարգմանությունը՝ մայրենի լեզվից ոտար լեզվի, ծառայում և քերականական գիտելիքների ստուգմանը, ըստվորում հայերեն գրած տեքստը պետք և ուղղել նույնքան մանրակրկիտ, վորքան ոտար լեզվինը:

## ԳՐԱՎՈՐ

Գրավոր վարժությունները հանդիսանում են աշակերտների անցած՝ նյութի (վորը յենթակա յե ախտիվ ոգտադործման) ամրապլնդման կարելիոր միջոցը: Ինչպես աշխատանքների բոլոր ուրիշ ձևվերի ժամանակ՝ լեզվի ուսուցման բնագավառում, այգպես ևլ գլխավոր աշխատանքներում պետք և պահպանվեն դժվարությունների աճման աստիճանականությունը, անցումը մարդող գրավոր վարժություններից դեպի այնպիսի աշխատանքներ, վորոնք ստեղծագործական բնույթ ունեն: Ուսուցման առաջին տարում, յերբ ուղղագրական ունակություն և ստեղծվում, մեթոդական լավագույն պրիոմը կլինի արտագրությունը՝ սկզբում դասարանական՝ գրատախտակից, հետո այն տեքստից, վորն անցիլ են այդ դասին: Մովորողի ուշագրությունն ավելի լավ սեվետելու համար խորհուրդ և տրվում արտագրության ժամանակ ընդդեկ լեզվական վորեվե յերեույթ՝ քերականական մի ձև կամ բառային գարձվածք:

Ուսուցման առաջին տարիներում արտագրությանը զուգընթաց տրվում են.

- 1) Կետագծերի (пунктир) լրացում, որինակ.  
Der Lehrer fragt . . . . .  
Le garçon va à . . . . .  
I see . . . . .

(աշակերտը պետք և գնի պակասող բառերը)

- 2) Փոխարինման վարժություններ՝ ուսուցիչը տալիս և քերականական վորոշ ձևի վերաբերող որինակելի նախագասություն, որինակ՝  
Ich gehe in die Schule  
Je vais à la fabrique  
I have a pencil

Աշակերտը, ուսուցչի ցուցմունքներէ համաձայն, փոխարինում է նախադասութեան մի մասը, որինակ.

Ich gehe in die Fabrik.

Je vais a l'école.

I have a book.

3) Անցնելիք թեմային համապատասխան վորոշ կառուցվածք ունեցող ինքնուրույն նախադասութեաններ կամ մի քանի կապակցված ֆրազներ կազմելը, որինակ.

Ich habe ein Zimmer

Mein Zimmer ist grob. Dort steht ein Tisch

Nous vous une chambre. Notre chambre est grande.

Dans notre chambre il y a trois lits, une table.

I have a room. My room is large. There is a table in my room.

4) Սովորողը հետզհետ անցնում է նկարագրութեաններ, խոսակցութեաններ, պատմվածքներ, նամակներ և այլն կազմելուն.

5) Գրավոր պատասխաններ՝ տեքստից բղխող հարցերին.

6) Կարգացած մասերիալից հարցեր կազմելը կհանդիսանա այնպիսի վարժութեան, վոր բարձր գասարաններէ աշակերտներին կհասցնի կարգացած սլանը և կոնսպեկտը կազմելուն:

Գրավոր աշխատանքներէ ձևերից են հանդիսանում քելագրուրլուցները, վորոնց նպատակն այն է, վոր սովորողները մեջ իրենց լրամները ճիշտ գրելու ունակութեան մշակվի:

Կան թեկադրութեան հետևվյալ անսակները.

1) Բացատրական թեկադրութեան, յերբ թեկադրութեան ժամանակ ուսուցիչն ինքը կանգ է առնում առանձին բառերի գծարութեաններէ և քերականական յերևութեաններէ վրա, վոր պարունակում է թեկադրութեանը:

2) Տեսողական թեկադրութեան—յերբ աշակերտները հիշողութեամբ գրում են ուսուցչի կողմից գրատախտակի վրա դրած իրենց լավ ծանոթ տեքստը՝ գրատախտակի վրայից այն ջնջելուց հետո:

3) Լսողական թեկադրութեան՝ սովորողներին ծանոթ բառամթերքով գործադրվում է ֆոնետիկական ունակութեաններն ստուգելու համար.

4) Ազատ թեկադրութեան՝ փոքր հոգվածը հիշողութեամբ դրի առնելը հանդիսանում է լավ միջոց ստուգելու աշակերտի բառային, քերականական և շարահյուսական բաղան և մոտենում է ազատ վերապատմութեանը:

5) Անդիր սովորած վոտանավորը կամ արձակի մի հատվածը աշակերտները գրում են անդիր:

## ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քերականությունն ավանդվում է տեքստային մատերիալի վրա և ողնում է աշակերտին ճիշտ արտահայտելու իր մտքերը: Ուսուցման առաջին յերկու տարում բոլոր բացատրությունները արվում են մայրենի լեզվով, ըստվորում այդ բացատրությունները պիտի լինեն շատ պարզ և կոնկրետ: Անհրաժեշտ և սովորողներին ցույց տալ ուսումնասիրվող լեզվի առանձնահատկությունը՝ վոճական առանձնահատկությունները (ИДИОМАТИЧНОСТЬ), ինչպես նաև մայրենի լեզվի հետ ունեցած նմանողությունները: Քերականությունը պետք է դանի իր կենդանի կիրառությունը խոսքի մեջ և տեքստի վրա կատարվող աշխատանքներում: Քերականական աշխատանքի յերկուսը դպրոցում պետք է դառնա ամբողջական նախադասությունը և նրա համեմատությունը աշակերտի մայրենի լեզվի համապատասխան նախադասության հետ: Քերականական դիտողությունները ղերմաներեն լեզվի մեջ ուսուցման առաջին խիլ քայլերից արդեն, տարվում են յերկու ուղղությամբ՝ շարահյուսության և ձևաբանության: Նախադասությունը և նրա տարրերը, բառերի կարգը ուսումնասիրվում են միաժամանակ (և համակենտրոն) հոլովման և խոնարհման ձևերի հետ: Անդրերեն և Ֆրանսերեն լեզուների սպիցիֆիկ առանձնահատկությունները սովորողների ուշադրությունը կենտրոնացնում են դիտարկողական շարահյուսության վրա, ոճանդակ բառերի ղերի վրա, նախդրավոր և նկարագրական կառուցվածքների վրա:

## ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՒՐԱՆՔՆԵՐ

Ոտար լեզու սովորելիս տնային աշխատանք կատարելը խիստ պարտադիր հանդամանք է, քանի վոր նա ոճանդակում և դասարանում անցած նյութը յուրացնելուն:

Տնային աշխատանքները պետք է շատ վորոշ ձևավորվեն և հանդամանորեն բացատրվեն աշակերտներին:

Տնային աշխատանքների համար վորպես նյութ մեծ մասամբ ծառայելու յնի ամեն տեսակի դրավոր վարժությունները:

Տնային աշխատանքներին հատկացված ժամանակի մի մասը հատկացվում է նաև ընթերցանության տեխնիկական դարգացնելու, վորտանավորներն անգիր սովորելու և այլն:

## ՉՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՐՆԵՐ

Լեզվական աշխատանքների արդյունավետության, կոնկրետացման և ախտվացման համար անհրաժեշտ է դպրոցն ապահովել համապատաս-

խան պիտույքներով: Անհրաժեշտ և ձեռք բերել հետևյալ դիզակտիկ նյութերը՝ քերականական աղյուսակներ, սքեմաներ, հնչյունային և այբբենական աղյուսակներ, նկարներ, խաղեր և այլն:

Դպրոցի գրադարանը պետք և ապահովվի լեզվի տեսակետից մատչելի գեղարվեստական գրվածքներով, վրոնք իրենց բովանդակությամբ պիտի լինեն ակտուալ և պիտի կարողանան համընդհանուր սովորողներին:

Ոտար լեզուների դասատուներին խորհուրդ և արվում ժամանակավորապես ոգտագործել մայրենի լեզվի գննական պիտույքները, որինակ՝ խոսքի զարգացման աշխատանքի համար յեղած աղյուսակները, մայրենի լեզվից՝ տարրական դպրոցում:

## Ծ Ր Ա Ք Ի Ր

ՀԻՆԳԵՐՈՐԳ ԳՄՍԱՐՄՆ (Ուսուցման առաջին սարի)

### ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

Ներածական կուրս (տես մեթոդական նամակը):

1. Թ հ մ ա տ ի կ ա ը ո լ ո Ր յ ե ը ե ք լ ե ղ ու ն ե ը ի հ մ ա Ր: Փարուլային պատմվածքներ հետևյալ թեմաներով. ա) դպրոց, դասարան, բ) դպրոցական կյանք, գ) տուն, սենյակ, ընտանիք, դ) Պրոլետարական Մեծ Հեղափոխության տարեգարձի տոնակատարման նախապատրաստություն, ձմեռային սպորտ, ե) Մայիսի 1-ի տոնը, գարուն:
2. Բ ա ու ա պ ա շ տ Ր: 300 բառ, վրոնցից 200-ը ակտիվ: Բառերը վերցվում են առորյա խոսակցական լեզվից՝ կապված թեմատիկայի հետ:
- 3) Բ ա ն ա վ ո Ր խ ո ս ք: Կարողանալ վարել խոսակցություն՝ անցած լեզվական նյութերի հիման վրա, պատասխանել ուսուցչի և իր ընկերոջ հարցերին անցած թեմատիկայի համապատասխան: Կարողանալ հասկանալ ուսուցչի խոսքը՝ դասարանական առորյայի սահմաններում:

4. Կ ա Ր զ ա Ր: Կարողանալ պարզորոշ կարդալ սովորած տեքստը՝ պահպանելով արտասանության և ինտոնացիայի ճշտությունը և հասկանալ կարդայածը: Անգլերեն և ֆրանսերեն լեզուների համար կարողանալ կարդալ տառադարձված մատերիալը:

5. Գ Ր ա վ ո Ր: Տեքստն արտադրել, ինչպես գրատախտակից, այնպես էլ զրբից: Գրավոր վարժություններ՝ տեղադրություններից, տեքստի նախադասությունները փոխարկելով, հարցերի պատասխաններ, կարողանալ անսխալ զրել անցածի սահմաններում թեղադրություն և այլն: Լողունգներ կազմել:

6) Բ ե ր ա Լ ա ն ու թ յ ու ն: Ծրագրի սահմաններում քերականա-  
կան մատերիալի ակախիվ ուղտադործումը՝ բանավոր արտահայտություն-  
ների և դրավոր վարժությունների ժամանակ:

## ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

1. Հաստատական, հարցական, ժխտական և հրամայական նախա-  
դասություններ:

2. Բայ. ա) թույլ և ուժեղ խոնարհման ներկա ժամանակը-  
դեմքի ձևերի հետ ծանոթացումն է կատար և ածվում հետդնտե,  
սկսելով յեղակի և հոգնակի թվերի առաջին և յերրորդ գեմքերից,  
վերջացնելով յեղակի և հոգնակի թվերի յերկրորդ գեմքով, բ) sein և  
haben բայերի ներկա ժամանակը, գ) wollen և können բայերի ներկա  
ժամանակը:

3. Գոյական անուն. ա) գոյականները՝ վորոշյալ և անորոշ հոգե-  
րով, բ) ծանոթություն իդական, չեղոք և արական սեռի գոյական  
անունների ուղղական, տրական, սեռական, հայցական հորվների  
ձևերի հետ (ուժեղ հորվում), գ) ակախիվ կերպով յուրացրած գոյական  
անունների հոգնակի թիվը:

4. Նախդիր. ա) in, an, auf հայցական և տրական հորվների  
հետ, բ) aus, mit, nach, von, zu տրական հորվների հետ (տրվում են  
վորպես բառային մատերիալ):

5. Անձնական գերանունները ուղղական հորվով. տրական և  
հայցական հորվներում նույն գերանունը վորպես բառային մատերիալ,  
հոգերի փոխարեն ստացական գերանունները գործածությունը բոլոր  
հորվներում:

6. Ածականը վորպես ստորոգյալ

7. Թվարկում մինչև 100 (քանակական և դասական՝ գործնակա-  
նորեն):

## ՖՐԱՆՍԵՐԵՆ

1. Բայ. ա) բայի տեղը հաստատական և հարցական նախադասու-  
թյուններում. բ) Présent de l'Indicatif առաջին խմբի բայերի, 2-րդ  
խմբի ամենաշատ գործածական բայերի (finir) և 3-րդ խմբի բայերի  
(lire, prendre), գ) այդ բայերի Imperatif-ը. être բայը Présent-ում  
վորպես կապ, դ) avoir և être բայերի Présent-ը, Անդրադարձ բայերը  
Présent de l'Indicatif:

2. Գոյական անուն. ա) գոյական անուն՝ վորոշյալ և անորոշ  
անդամով, բ) իդական սեռի գոյական անուններ կազմելը, գ) գոյական  
անունների հոգնակի թիվը:

3. Ածական. ա) ածականը վորպես վորոշիչ և ստորոգյալ, բ) իգական սեռի հատուկ ձեւ ունեցող (grand, petit) և չունեցող (rouge)՝ ածականներ. գ) ածական անունների հոգնակի թվի կազմելը, դ) սասցական ածականներ՝ mon, ton, son, ե) ցուցական ածականներ, ce, cet, cette, ces, զ) մի քանի ածականների տեղը՝ le parti communiste, le drapeau rouge.

4. Անշեղտ անձնական դերանուններ՝ je, tu, il, elle, nous, vous, ils, elles:

5. Նախդիրներ. ա) à և de նախդիրների գործածութունը վորոշյալ անդամներով (au, aux, du, des). բ) à նախդիրը վորպես ուղղութուն դեպի վորեւի տեղ (nous allons à l'école) կամ վորեւի տեղում գտնվելը (ce professeur travaille à la Sorbonne) ցույց տվող մասնիկ. զ) à նախդիրի գործածութունը կողմնակի լրացում կազմելու համար, վորը համապատասխանում է ուսուցիչի տրական հոլովին (Je donne mon cahier à mon professeur). զ) de նախդիրի գործածութունը գոյականի հետ կողմնակի լրացում կազմելու համար, վոր համապատասխանում է ուսուցիչի սեռական հոլովին (Paris est la capitale de la France). ե) à, de, sur, sous, dans նախդիրների կիրառութունը:

6) Բառակազմութուն. գոյականների վերջածանցները eur—tracteur direct eur, բայերի վերջածանցները՝ er—donner er:

7) Թվարկում մինչեւ 100 (քանակական և զատական):

## ԱՆԳՎԵՐՆՆ

1. Ծանոթութուն հնչյունաբանական տառադարձության նշանների հետ: Հասկացողութուն անգլիական արտասանության չորս առանձնահատուկութունների հետ—ա) առաջադիր փակ ձայնավորներից առաջ յեղած բաղաձայնների փափկացման բացակայութուն. բ) վերջադիր բաղաձայնների կոշտ արտասանութունը. գ) վանկերի բաժանումը յերկարների և կարճերի. դ) շեշտի ուժը և անշեղտ ձայնավորների չեղոքացումը:

2. Տարրական ծանոթութուն իջնող և բարձրացող ինտոնացիայի՝ What is this? Is this a book? տիպի:

3. Տարրական հասկացողութուն հայերեն և անգլիերեն լեզուների նախադասութունների բառերի կարգի մասին:

4. Պարզ համառոտ նախադասութունների կառուցվածքը՝ դրական, ժխտական և հարցական ձևերի ժամանակ (հարցի պատասխանը լրիվ և կրճատ):

5. Ընդարձակ նախադասութունների կառուցվածքը՝ դրական, ժխտական և հարցական ձևերի ժամանակ:

6. and, but, և or շողկապները:

7. There is, there are արտահայտութիւնը (թվականով և ժխտականով):

8. Վերջալ և անորոշ հոգերը (տարրական հասկացողութիւն):

9. Գոյականների հոգնակի թիվը (ուշադրութիւն դարձնել հոգնակի թիվի վերջավորութեան արտասանութեան վրա՝ “s” — խուլերից հետո, “z” — հնչեղներից հետո և այլն):

10. Անձնական դերանուններ՝ I, he, she, it, we, you, they:

11. Ստացական դերանուններ՝ my, his, her, its, our, your, their:

12. To have և to be բայերի ներկա ժամանակը՝ դրական, հարցական և ժխտական ձևերով (ժխտական ձևը to have-ից՝ “no”-ի հետ)։ Ուշադրութիւն դարձնել ներկա ժամանակի յեղակի յերրորդ դեմքի վերջավորութեան արտասանութեան վրա:

13. Present Continuous:

14. Present indefinite-ի յերեք ձևերը ամենագործածական բայերից:

15. Ինքիներեի և հրամայական յեղանակ:

16. Ամենագործածական նախդիրները՝ on, in, at, under, from, to, into, of, with, for, between, behind, in front of, about, near, far:

17. Թվարկում մինչև 100:

## ՎԵՅՆԵՐՈՐԻ ԴԱՍԱՐԱՆ (ուսման յերրորդ տարի)

### ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

1. Թեմատիկա բոլոր յերեք լեզուների համար. ա) տարվա յեղանակներ՝ աշուն, ձմեռ, գարուն, ամառ, բ) Փարուլային պատմվածքներ հետևյալ թեմաներով՝ հագուստ և սնունդ, գ) հեղափոխական տոներ:

2. Բառապաշար: Նախկին ձեռք բերվածները վրա ավելացվում են 200 բառ, ընդամենը կլինի 500 բառ, վորոնցից 300-ը ակտիվ:

3. Բանավոր խոսք: Կարողանալ համառոտ կերպով պատմել անցած վորիկի թեմայի նկարի բովանդակութիւնը: Պատասխանել ուսուցչի և ընկերոջ հարցերին ընդարձակ նախադասութեամբ՝ ոգտվելով ձեռք բերած բառապաշարով և քերականական կառուցվածքներով: Կարողանալ հասկանալ ուսուցչի պատմածը կամ բարձրաձայն կարդացած տեքստը՝ միանգամայն ծանոթ բառամթերքով:

4. Կարգալը: Արագ և ճիշտ ինտոնացիայով կարդալ անցած տեքստը և դպրոցական գրադարանի՝ աշակերտների գիտութեան մակարդակին համապատասխանող՝ պատմվածքները:

5. Գրավոր: Նախադասություններն ձևավորված լինելու, տեքստի փոխարինում, աշակերտների կենցաղի շուրջը կազմել ինքնուրույն նախադասություններ և խոսակցություններ, համառոտ նկարագրություններ: Կարողանալ գրել թերագրություն, վորը պարունակի նոր բառեր, վորոնք գրության ձևով նման են ծանոթ բառերին:

6. Քերականություն: Քերականական մատերիալի ուղղագրությունը իրենց մտքերը գրավոր կամ բանավոր արտահայտելու ժամանակ:

## ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

Ընդարձակ նախադասություն. ա) կապող բառի տեղը և Partizip-ը բառերի ուղիղ և շրջուն կարգը, man գերանվան ֆունկցիան նախադասության մեջ և այդպիսի նախադասության թարգմանությունը հայերենի:

2. Բայ. ա) հիմնական ձայնավորը վորովտող և չվորտող բայերի Imperfekt և Perfekt, բ) հրամայական ձևը, գ) sollen և müssen բայերը Präsens և Imperfekt-ում:

3. Գոյական. ա) հոլովման արիպերը, բ) գոյականների սխտեմատիզացիան:

4. Ածական, համեմատության աստիճանները:

5. Նախդիրները՝ արական և հայցական հոլովներով:

6. Թվաբերում մինչև 1000 (տասնյակն արով և հարյուրյակներով) Գրասական թվականներ կազմելը:

## ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵՁՈՒ

1. Բայ. ա) 3-րդ խմբի բայեր, բ) 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի բայերի Passé composé, Futur simple և con յենթակա ունեցող նախադասություն և նրա համարժեքը հայոց լեզվի մեջ, գ) անդրադարձ բայերը Présent de l'Indicatif, և Impératif-ով, ե) անդեմ կառուցվածքներ՝ il y a, il fait, il faut:

2. Ածական. ա) ածականների համաձայնեցումը, բ) դասական թվականների կազմվելը, գ) համեմատության աստիճանները:

3. Դերանուն. ա) գերանունը նախադասության մեջ (գերանունը՝ յենթակա. գերանունը՝ ուղիղ և անուղղակի խնդիր). բ) անշեշտ ձևեր (բայի հետ), շեշտված ձևեր (առանց բայի). հարցական դերանուններ՝ qui և que (Qui est-ce qui? Qu'est-ce qui?):

4. Նախդիր. ա) նախդիրը հետևյալ կառուցվածքներում՝ բայ + նախդիր + գոյական (il donne le journal au camarade), մակբայ + նախդիր + գոյական (nous avons beaucoup de ilvres).

բ) à նախդիրի գործածությունը ժամանակի իմաստով՝ je me lève à 7 heures:

4) de նախգրի գործածութիւնը հատկացուցիչ կազմելու համար  
j'achète un billet de théâtre:

դ) de նախգրի մասնակիութիւնն ցույց տալու հատկութիւնը՝  
donnez-moi du pain; j'ai assez d'argent:

ե) de-ն ժխտական արտահայտութիւններում:

5. Բառակազմութիւն: Գոյականների վերջածանցները՝ iste — com-  
muniste, ier — ouvrier, al — Journal. բայերի՝ ir — finir

6. Թվարկում մինչեւ 1000:

### ԱՆԳԼԵՐԵՆ

1. Ընդարձակ նախադասութիւն կառուցվածքը (ժամանակի, տեղի, նպատակի և ձեւի պարագաներով):

2. Ջանադան տիպի հարցական նախադասութիւնների կառուց-  
վածքը՝ Who lives here? Does he live here? Where does he live?

3. Հարցի պատասխան՝ գոյականները դերանուններով փոխարի-  
նելով, որինակ՝ Is the boy reading a book? Yes, he is reading it-

Անդամ արտահայտութիւն It is cold տիպի:

4. There is, there are արտահայտութիւնները՝ many, much,  
few, little, any, some, nothing, no, not any բառերի կապակցու-  
թիւնը:

5. Present և Present Continuous գործածութիւնների տարբե-  
րութիւնը գիտակցումը:

6. Ապառնի ժամանակը՝ դրական, ժխտական և հարցական ձե-  
վերով:

7. can, must և may պահասովոր բայերը՝ ներկա ժամանակով:

8. Համեմատութիւն աստիճանները (հետեւյալ տիպերի՝ long,  
longer (than...), the longest):

9. Անձնական դերանունների հայցական հոլովը:

10. Սեռական հոլով:

11. Նախդիրներ:


Վորպես բառամթերք կարելի չէ գործածել դասարանական  
առորյա արտահայտող ամենագործածական բայերի Present Perfect-ը,  
որինակ՝ Have you finished copying? և այլն, ինչպես նաև չլրճատ-  
ված բարդ նախադասութիւնների տեսակները:

12. Թվարկում մինչեւ 1000. դասական թվական կազմելը:

### ՅՈՒՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ (ուսման յերրոզ տարի)

### ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

1. Թե մատիկա բոլոր յերեք լեզուներին համար  
ա) ամառային արձակուրդներ՝ ամառային սպորտ, բնութիւն, տու-  
թիզմ, բ) Ֆարուային պատմվածքներ կրտստեսային կյանքից,



դ) փոդոցի, պարկի, կինոյի, թատրոնի, փոստի և հեռազրի նկարա-  
գրութիւնն, դ) հեղափոխական տոներ:

2. Բ ա ո ա պ ա շ ա ր: Նախորդ տարիներում սովորածների վրա  
ալիւլացվում եւս 300 բառ, ընդամենը 800 բառ, վորից 500—600  
բառը՝ ախտիվ: Աշխատանք ե կատարվում բառակաղմության ուղղու-  
թյամբ՝ բնորոշ նախածանցներ և վերջածանցներ. ածանցյալ բայեր,  
բառաբարդութիւնն:

3. Բ ա ն ա վ ո ր լ յ ո ս ք: Կարողանալ հասարակ ձևվով ծանոթ  
բառերի ոգնութիւնը պատմել կարգացած կամ ուսուցչի պատմած  
կապակցված մատերիալը: Կարողանալ հանդես գալ հաղորդումներով  
և վարել զբույց ուսուցչի ու ընկերների հետ տանը նախապատրաստած  
թեմայի շուրջը: Տեքստի վերաբերյալ հարցեր կազմել, այնպես վոր  
պլանի ընդմէջ կրի: Կարողանալ հասկանալ ուսուցչի համառոտ հաղոր-  
դումները կամ պատմածները, վորոնք կապուենակեն վորք տոկոսով  
անծանոթ բառեր:

4. Կ ա ր դ ա լ Լ: Կարգալ նոր տեքստը՝ միայն ծանոթ բառեր  
ունեցող տեքստ և գլորցական գրադարանի բառարանի ոգնութիւնը  
նաև անծանոթ բառեր ունեցող տեքստ:

5. Գ ր ա վ ո ր: Կարողանալ մշակած պատմվածքի մասին հարցեր  
կազմել և այդ պլանի հիման վրա կապակցված ձևով գրավոր շարա-  
դրել նույն այդ պատմվածքի բովանդակութիւնը: Կարողանալ վոր  
բարդ տեքստը ոտար լեզվից թարգմանել հայերենի:

6. Ք ե ր ա կ ա ն ու թ յ ու ն: Իր մտքերը գրավոր կամ բանավոր  
արտահայտելիս հիմնական քերականական ձևներն ախտիվ ձևով  
ողտադործելուց բացի, աշակերտը պետք ե կարողանա տեքստը վեր-  
լուծել թե ըստ շարահյուսութիւնն, թե ըստ ձևվարանութիւնն:

## Գ Ե Ր Մ Ա Ն Ե Ր Ե Ն

1. ա) Ընդարձակ նախադասութիւնն, ոժանդակ բայի և ինքիւն-  
տիվի տեղը. բ) բարդ-ստորադասական նախադասութիւնն՝ das,  
weil, der, die, das-ի հետ. գ) բառերի կարգը գլխավոր և յերկրորդա-  
կան նախադասութիւններում:

2. Բ ա յ. ա) կերպավոր բայեր, նրանց խոնարհումը Präsens և  
Imperfekt-ով. բ) ապառնի ժամանակ. գ) անջատող նախածանցող  
բայեր. դ) Plusquamperfekt կազմվելը և գործածութիւնը: Partizip  
I-ին և 2-րդ վորպիս վորոշիչներ:

3. Գ ա յ ա կ ա ն. ա) գոյական անունների հորովման ձևերի մշակ  
ման խորացումը՝ յեզակի ու հոգնակի թվերով. բ) հատուկ անունների  
հորովումը:

4. Ածականը վորպէս վորոշիչ: Նրա հոլովումը:

5. Դերանուններ. ա) անձնական դերանունների հոլովումը. բ) ցուցական և ստացական դերանունների հոլովումը՝ կապված ածական լրացումներով գոյականների հոլովման հետ. գ) հարցական և հարաբերական դերանուններ:

## ՖՐԱՆՍԵՐԵՆ

1. ա) 1-ին, 2-րդ և 3-րդ խմբերի բայերի Imparfait. Plus-que-parfait և Passé simple del'Indicatif, ներսում. բ) être-ով խոնարհվող բայեր:

2. Անդրադարձ բայերը Passé Composé-ում՝ դրական, բացասական և հարցական ձևվերով:

3. Participe-ն վորպէս ածական՝ une porte fermée:

4. Նախդիր. ա) նախդիրը հետևելյալ կառուցվածքով՝ գոյական + նախդիր + գոյական (un verre de thé, une machine à vapeur):

բ) à նախդիրը վորպէս պատկանելիութուն ցույց տվող մասնիկ (ce livre n'est pas à moi):

գ) de նախդրի անջատում ցույց տալը՝ je sors de l'école:

5. Բառակազմութուն. գոյականների վերջածանցները՝ aîre—prolétaire, ien—parisien. ածականների վերջածանցները՝ aîs—français, al-normal, eux—heureux բայերի վերջածանցները՝ re, oîr—vendre recevoir:

## ԱՆԳԼԵՐԵՆ

1. Բարդ ստորադասական նախադասութիւնների կառուցվածքը՝ վորոշիչ և խնդիր յերկրորդական նախադասութիւնների կառուցում, վորոնց մեջ

2. Այնպիսի նախադասութիւնների կառուցում, վորոնց մեջ գոյականներն ու բայերն ունեն no, not, not any ժխտականները:

3. Անցյալ ժամանակը (Past Indefinite) դրական, հարցական և ժխտական ձևվերով:

4. Յերկրորդական խնդիր նախադասութիւնների կառուցումը, յերբ՝ գլխավոր նախադասութիւնը գործածված է Past ժամանակներում: Sequence of Tenses, should, would հասկացողութեան տարբերը:

5. Indefinite-ի յերեք ժամանակները to have, to be բայերից՝ can, may բայերը անցյալ ժամանակով:

6. there is, there are արտահայտութիւնները Indefinite-ի յերեք ժամանակներով:

7. Past Continuous-ի համեմատութիւնը Past Indefinite-ի հետ:

Հասկացողութուն Continuous ժամանակների ամբողջ խմբի մասին՝ համաձայն to be + ing ընդհանուր սխեմայի:

8. Present—Perfect յերեք ձևվերով:

9. Present & Past Participle ածականների դերում:

10. Yours, ones տիպի դերանունները:

11. Համեմատության աստիճանը հետևյալ տիպի՝ good, better, the best, expensive, more expensive, the most expensive:

12. Նախադասության վերլուծութունը: Նախադասության գլխավոր անդամները գտնելու յիզանակներն՝ ըստ իրենց հատկանիշների: Նախադասության կառուցվածքի սխեման:

13. Միևնույն գրաֆիկական ձևվը՝ տարբեր խոսքի մասերի ֆունկցիաներով, որինալ՝ plan—պլան, plan—պլանային, plan—պլանավորել:

14. Բառակազմության ելմանները—գոյականների տիպական վերջավորութունները՝ sion, sion, tion, ment, ance, ity, ty, y:

15. Մակբայի ly վերջավորութունը:

16. Բառարանից ոգավելու հիմնական կանոնները:

## ՈՒԹԵՐՈՐԳԻ ԳԱՍՍՐԱՆ (Ուսման չորրորդ արի)

### ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

1. Թե մատիկա բոլոր լեզուների համար. ա) նվաճումներ՝ կուլտուրայի, գիտության և տեխնիկայի բնագավառում. բ) ճանապարհորդութուններ և արկածներ, գ) գրանցից դուրս մշակվում և և ընդարձակվում առօրյա կյանքից վերցրած թեմատիկան:

2. Բ ա ո ա պ ա շ ա բ: Ընդամենը 1000 բառ, գրանցից 750 բառ (առաջուց ձևք բերածների հետ միասին) ակտիվ:

3. Բ ա ն ա վ ո թ խ ո ս ք: Կապակցված բանավոր խոսքի ունակութունների խորացում:

ա) Կարողանալ բացատրել ուսուցչի և ընկերների հետ՝ առանց նախկին յերեք տարիներում կուտակած կենցաղային բառարանային մատերիալի նախնական նախապատրաստության:

բ) Կարգացած գրական մատերիալի վերապատմում՝ կրեկտիվ կերպով կազմած գրավոր պլանի համաձայն:

գ) Ինքնուրույն պատմվածքներ՝ մշակած թեմաների շուրջը:

դ) Կարողանալ հասկանալ քերականական բացատրութունները ոտար լիզվով:

Դրա հետ զուգընթաց աշակերտների բառապաշարի հարստացումն



Յուշտեղան դերանունները (celui, celle, cela, ceci, ceux):

3. Ն ա խ դ ի ը ն եր: ա) à նախդիրը վորպես վորեև բանի պաշտոն ցույց ավող բառ (boîte à ouvrage): բ) à նախդիրը վորպես լոֆիտիֆ-ը բայի հետ կապող (je commence à travailler à 6 heures): գ) à նախդիրը վորպես Լոֆիտիֆ-ը ամականի հետ կապող (c'est une chose difficile à comprendre. դ) de նախդիրը վորպես՝ Լոֆիտիֆ-ը բայի հետ կապող (je finis de travailler à 8 heures): ե) De-ն վորպես ինֆինիտիվը ամականի հետ կապող (nous sommes heureux de vous voir) կամ գոյականի հետ կապող (il a le droit de vous poser cette question):

4. Բ ա ո ա կ ա դ մ ու թ յ ու ն: Գոյականների վերջածանցները. isme—communisme, ure—dictature, ique—periodique, ois—bourgeois, ier—journalier:

## ԱՆԳԼԵՐԵՆ

1. Չկրճատված չերկրորդական պորագա նախադասությունների կառուցվածքը: Present-ի գործածությունը it, when շարկապններից հետո:

2. Պասիվ ձևվերի նախադասությունների կառուցվածքը (Indefinite-ի յերեք ժամանակներով):

3. Դերբայական արտահայտություններով նախադասությունների կառուցվածքը (վորոշիչ և պարագայական չերկրորդական նախադասությունների կրճատումը):

Բայերի չերրորդ և չորրորդ ձևվերը՝ կապված վորոշիչ չերկրորդական նախադասությունների կրճատման հետ: Յերրորդ ձևվը, չերկրորդական նախադասությունների կրճատման հետեվանքով, վերածված պասիվ ձևի՝ the letter written by me:

Չորրորդ ձևը, չերկրորդական վորոշիչ նախադասությունների կրճատման հետևանքով, վերածված ակտիվ ձևի՝ the boy writing on the blackboard is:

4. Բայերի առանձնահատկությունները (իդիոմատիկան) get up, get of, get away տիպի մակրայներ և to be tired, to be like արտահայտությունները:

5. Present Perfect-ը Past Indefinite-ի համեմատությամբ:

6. Հասկացողություն Perfect-ի ժամանակների խմբի մասին:

7. Բառակազմություն—ամականների տիպական վերջավորությունները՝ less, ful, ic, al, able, ive:

8. Աշխատանք բառարանով:

ԳԻՏԵԼԻԲՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

1. Թեմատիկա բոլոր յերեք լեզուներին համար:  
ա) սոցիալ-կենցաղային և քաղաքական բնույթի դեպքերի նկարագրություն:

բ) Գեղարվեստ, գիտություն և տեխնիկա:

գ) Բանվորական շարժում:

դ) Ինչպես կլասիկ, այնպես էլ ժամանակակից գրականության մեջ արտացոլած բուրժուական հեղափոխությունը: Սրանցից դուքս թեմատիկա առորյա կյանքից՝ ավելի խորացրած մշակումով:

2. Բ ա ո ա պ ա շ ա ը: Նախորդ տարիներում կուտակվածներին հետ հասնում ե 1200 բառի, վորոնցից 900-ը ակտիվ:

3. Բ ա ն ա վ ո ը խ ո ս ք: Կապակցված կերպով պատմել և հաղորդումներ անել՝ նախապես կազմած պլանով կամ կոնսպեկտով: Ձրոյց սոցիալ-կենցաղային կոնկրետ թեմաների շուրջը: Բոլոր այդ տեսակի աշխատանքների հիմքը կազմում և զբաղված և լրագրային բնույթի մշակված տեքստերի թեմատիկան: Բացի այդ, աշակերտները պետք է հասկանան ուսուցչի հաղորդումներն անձանոթ թեմայի շուրջը:

4. Կ ա ը ա լ ը: Ձեռք բերել արագ կարդալու և կարդացած անձանոթ նյութն ամբողջությամբ հասկանալու ունակություն:

ա) Կլասիկական գրական-գեղարվեստական գրվածքներից լեզվի տեսակետից վոչ դժվար քաղվածքներին կուրսորային ընթերցումը:

բ) Անալիտիկ ընթերցում՝ դրան հաջորդող բանավոր և գրավոր մշակմամբ:

գ) Բառարանի ոգնություններ լրագրային մատերիալի և դպրոցական դրադարանի վոչ բարդ տեքստերի ինքնուրույն ընթերցում:

5. Գ ը ա վ ո ը. զբաղվող աշխատանքներ:

ա) Բանավոր վարժությունների մատերիալը նախապատրաստող և յուրացումը խորացնող՝ պլան, կոնսպեկտ, թեզիսներ և բառային մատերիալի թեմատիկ ընարություն:

բ) Տեքստի խորացրած մշակմանը նպաստող աշխատանքներ:

գ) Ավելի բարդ տիպի քերականական վարժություններ և տեքստի նախադասություններին վերափոխում:

դ) Բառերի լամբավորումը՝ ըստ ձևվաբանական, իմաստաբանական և ստորաբանական հատկանիշների:

ե) Բովանդակություն վերապատմում (գրավոր), գրավոր պատմվածք՝ պլանով, ինքնուրույն նկարագրություն և պատմվածք:

6. Գ ե ը ա կ ա ն ո լ թ յ ու ն: Ձևվաբանական և շարահյուսական վերլուծություն:

## ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

1. Բարդ նախադասութիւն. ինֆինիտիվի միջոցով կրճատված յերկրորդական նախադասութիւնն՝ um... zu, ohne... zu-ի հետ:
2. Պասիվ ձևվի բարդ ժամանակները
3. Konjunktiv-ը և Konditionalis-ը կազմելը և նրա գործածութեան ուսուցնասիրութիւնը տեքստում:
4. Բայերի խոնարհման ակտիվ և պասիվ ձևերի սխտեմատիզացիան:
5. Կետադրութեան հիմնական կանոնները:

## ՖՐԱՆՍԵՐԵՆ

1. ա) Անցած բայական ժամանակների ֆորմալ և ֆունկցիոնալ ամփոփումն, բ) տեքստում հանդիպող բայերի «մեռյալ» խոնարհման խորացրած մշակումը, գ) Subjonctif-ը վորպէս կասկած, յենթադրութիւն և ցանկութիւն արտահայտող յեղանակ, դ) բոլոր յերեք խմբի բայերի Présent du Subjonctif-ը. ե) բայերի պասիվ ձևը, զ) անուղղակի հարց՝ si շաղկապով, կ) prepositions participes (la leçon finie, il quitte la chambre), proposition infinitive (je l'entends chanter):
2. faire և laisser բայերի կառուցվածքը infinitif-ով:
3. Անձնական, ստացական, ցուցական, հարարերական և հարցական դերանունների սխտեմատիզացիան:
4. Նախդիրների գործածութեան կրկնութիւնը:
5. Բառակազմութիւնը: Գոյականների վերջածանցները՝ ée—entrée. Ածականներինը՝ able—agréable:
6. Կետադրութեան հիմնական կանոնները:

## ԱՆԳԼԵՐԵՆ

1. Վորդիչ յերկրորդական նախադասութեան կրճատումը՝ պարագայական բառը գուրս հանելու միջոցով՝ The house I live in is large:
2. Պարագայական յերկրորդական նախադասութեանների կրճատումը հայցական հոլովի միջոցով՝ ինֆինիտիվի հետ՝ I want him to come here at 6: Յերկրորդական խնդիր նախադասութեանների կրճատումը Gerund-ի միջոցով: Տարբերութիւնը Gerund-ի և Verbal noun-ի մեջ:
3. Բառակազմութեան վերաբերյալ կատարվող աշխատանքների խորացումը: Հիմնական նախածանցները՝ un, im, in, re, ex:

4. Բոլոր մշակած ուժեղ բայերի ամփոփումն ու սխտեմատի-  
զացիան:

5. Infinitive-ի տիպի բոլոր անցածների սխտեմատիզացիան  
(պորդ, բարդ, ակտիվ և պասիվ): Infinitive-ի տարբեր ֆունկցիաները  
(վորպես յենթակա, վորպես խնդիր, վորպես բաղադրյալ ստորոգյալ,  
վորպես վորոշիչ):

6. Անորոշ և վորոշյալ հոգերի գործածության մասին ունեցած  
անդեկությունների խորացում:

7. Կետադրության հիմնական կանոնները:

## ՏՍՍՆԵՐՈՐԳ ԳԱՍԱՐՍՆ (ՈՒՄԱՆ ՎԵՆԵՐՈՂ ՏԱՐԻ)

### ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

1. Թեմատիկա բոլոր յերեք լեզուների համար:

ա) Սոցիալ-կենցաղային յերևույթներ. բ) դասակարգային պայ-  
քարի պատկերացումը կլասիկ և ժամանակակից գրականության մեջ-  
դ) արվեստի, գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները  
(ըստ լրագրերի և ժուրնալների). դ) պրոլետարական հեղափոխու-  
թյուն՝ ծանոթություն համաշխարհային գրականության կլասիկներ  
և ժամանակակից պրոլետարական գրողների հետ:

2. Բ ա ռ ա պ ա ռ : Ամբողջ դասընթացի ընթացքում պետք է  
յուրացվի ընդամենը 1500 բառ, վորոնցից 1000-ը ակտիվ: Բացի  
այդ, ծանոթանում են մի շարք առանձնահատուկ արտահայտություն-  
ների հետ:

3. Բ ա ն ա վ ո ռ խ ո ս ք : Ընդհանուր խմբական գրույցներ՝ կենցա-  
ղային կամ վերացական բնույթ կրող վորոշ թեմայի շուրջը: Ինքնու-  
րույն պատմություն, հաղորդում կամ յերևույթ՝ սովորողներին մատչե-  
լի թեմայի շուրջը:

4. Կ ա ը ղ ա լ ը : 10-րդ դասարանում անալիտիկ ընթերցանու-  
թյան նպատակն է՝ տալ աշակերտներին ոտար գրականության ա-  
պրիզում ինքնուրույն աշխատանք կատարելու ունակություններ:  
Ծանոթություն՝ բառային-քերականական վերլուծության սկզբունք-  
ների հետ: Կուրսորային ընթերցանություն ամբողջ բովանդակու-  
թյան ընդգրկմամբ:

5. Գ ը ա վ ո ռ : Պատի լրագրում սեռումնասիրվող լեզվով դիտ-  
դություն (փոքրիկ հոդված) գրելու հմտություն: Մշակած նյութի  
հիման վրա ինքնուրույն փոքրիկ պատմողական շարադրություն-  
ներ և ընության նկարագրություններ գրել: Կարգացած հոդվածի  
կոնսպեկտ կազմելու հմտություն:

6. Ք ե ը ա կ ա ն ու թ յ ու ն . բարդ-ստորագրասական նախադասու-  
թյունների շարահյուսական և ձևաբանական վերլուծությունը:

## ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

1. Բարդ նախադասութեան համադասական շաղկապներ, նախադասութեաններէ անշաղկապ միացումներ: Բարդ-ստորադասական նախադասութեաններ:

2. Անդլի կառուցվածքը հարստացնելու համար յերկրորդական նախադասութեաններէ մեջ գործածվող շաղկապներին, շաղկապական բառերին վերաբերող ձևք բերած գիտելիքներէ ընդարձակումը, որինակ՝ շաղկապներ կամ շաղկապական բառեր, վորոնք ցույց են տալիս պատճառ, պայման, մտադրութեան և այլն:

## ՖՐԱՆՍԵՐԵՆ

1. Պարզ և բարդ նախադասութեան մասին ստացած հասկացողութեան կրկնութեան, սխտեմատիզացիա և խորացում: Պարզ նախադասութեան ազատ և ակտիվ գործածութեանը՝ իր բոլոր ձևերով: Նախադասութեան անդամները՝ յինթակա, վոր արտահայտվում և գոյականով, գերանվամբ, ինֆինիտիվով՝ vouloir—c'est pouvoir, ուրիշ խոսքի մասերով—tout dort, պարզ ստորոգյալ, բաղադրյալ ստորոգյալ, շաղկապի և կապող բառի (ոժանդակ բայի) դերը. նախադասութեան յերկրորդական անդամներ—ինդերներ, պարագաներ: Վոչ քիվ նախադասութեաններ:

2. Եայ: Բացի մինչև 10-րդ դասարանն անցածներէց, սովորում են նակ՝ Futur dans le passé (Je pensais que vous ne viendriez pas aujourd'hui). Passé antérieur (յերկու ժամանակներն ել պետք և գտնել տեքստում):

Subjonctif présent-ի գործածութեան ակտիվացումը: Տեքստում գտնել Subjonctif passé:

Բայերի մեռյալ խոնարհման սխտեմատիզացիան:

3. Դերանուն: Ակտիվ ձևով տիրապետել անձնական, շեշտված և անշեշտ գերանունների հետվյալ տիպի նախադասութեաններում. Je lui donne ce livre. Qui me donne ce livre? Lui:

Հարաբերական գերանուններ. qui, que, quoi նախդրով և առանց նախդրի (Le camarade qui parle. Le camarade que je vois. Avec qui travaillez-vous? Avec quoi écrivez vous?):

Dont, lequel, laquelle հարաբերական գերանունները (պատիվ կերպով տիրապետելը):

4. Նախդրներէ գործածութեան սխտեմատիզացիան: Նախդրներէ խմբավորումը՝ համաձայն իրենց արտահայտած հարաբերութեաններէ:

5. Բառակազմութեան: Բառակազմութեանից անցած գիտելիքներէ խորացում և ամրապնդում:

6. Քերականական տեղեկատուներէց ոգտվելու հմտութեան:

## ԱՆԳԼԵՐԵՆ

1. Անգլերեն լեզվի համառոտ պատմութիւնը (ոտար լեզվով):
2. Լրագրային և տեխնիկական լեզվի կառուցվածքի առանձնա-  
կատուութիւնները: Ինվիերսիա:
3. Անցած նստածանցների և վերջածանցների կրկնութիւնը:
4. Աշխատանք համանիշ և հականիշ բառերի շուրջը, իմաստա-  
բանական խնդիրների շուրջը:
5. Present continuous-ի, Past continuous, Present Perfect-ի,  
Past Perfekt-ի պատիվ ձևվերը:
6. Հասկացողութիւնը բարդ gerund-ի մասին:
7. Having Written-ի տիպն աղտիվ Participle-ի բարդ ձևը:
8. ind-ը վորպես ձև՝ դերբայներ, բայանունների և բայածա-  
կանների ֆունկցիաներով. դերբայ, յերկրորդական նախադասութիւն-  
ներին փոխարինող դերբայներ:
9. Հիմնական շաղկապները (ըստ խմբերի՝ ժամանակի, պայմանի,  
տեղի, ձևի, նպատակի և այլն):
10. Նախադասութեան վերլուծութիւնը (գլխավոր և յերկրորդա-  
կան, լրիվ և կրճատված):



Յեկ. խմբագիր՝ Ի. Վարդանյան  
Սրբագրիչ՝ Խ. Այվազյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Այվազյան



5953

Դրավիտի լիազոր № 9-4217

Հրատ. 4343, պատվեր 874, տիրած 3000

Տրված է արտագրության 1937 թ. նոյեմբերի 9-ին

Ստորագրված է տպագրության 1937 թ. գեկտեմբերի 7-ին

---

Գեոհրատի 2-րդ առաքան, Յերեվան, Նալբանդյան 11


ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004431

ՀԻՆԸ 80 ԿՈՊ.

4



[074]

ПРОГРАММА

по преподаванию иностранных языков  
в неполных средних и средних школах